

# ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՐՑԵՐ—ВОПРОСЫ МИКРОБИОЛОГИИ

ԳՐԱԿ 4 (XIV)

1969

Վ Ա Ր Ա Կ Վ Ա Ր Ա Ն

Ա. Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ս. Ք. ԹԱՓԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՀՈՂԱՏԻՊԵՐՈՒՄ ՎԻՏԱՄԻՆ Բ<sub>12</sub>-Ի ԵՎ ՆԻԿՈՏԻՆԱԹԹՎԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մի շարք գիտականներ (Ովլարով, 1955, Զայլախյան, 1959 և ուրիշներ) վիտամիններն ուսումնասիրել են որպես բույսի աճման, զարգացման և բերքատվության բարձրացման գործոն:

Հողում վիտամինների պարունակության վերաբերյալ ուսումնասիրություններ է կատարել Շոպֆերը (1950), որը միևնույն ժամանակ առաջարկել է վիտամինների որոշման միկրոբիոլոգիական մեթոդը: Հետագայում, հողում վիտամինների պարունակության և այլ հարցերի վերաբերյալ աշխատանքներ են կատարել Օվլարովը (1955), Կրասիլնիկովը (1957), Շավլովսկին (1955) և ուրիշներ, որոնք նշել են նաև միկրոօրգանիզմների խոշոր դերը հողը վիտամիններով հարստացնելու գործում:

Հայաստանի հողերում վիտամին Բ<sub>12</sub>-ի առաջացման և տարածվածության վերաբերյալ աշխատանքներ կատարել են Է. Գ. Աֆրիկյանը և ուրիշները (1959): Վիտամին Բ<sub>12</sub>-ի ուսումնասիրությունը, հետաքրքրական է այն տեսակետից, որ նա սինթեզվում է միայն միկրոօրգանիզմների կողմից, և նրա տարածվածությունը հողում կարող է բնորոշել տվյալ հողատիպի բիոգենությունը: Համաձայն գրական տվյալների, նիկոտինաթթուն բույսերի աճման ու զարգացման կարևոր գործոններից մեկն է հանդիսանում:

Վիտամինները կազմում են ֆերմենտների ակտիվ մասը: Այդ տեսակետից հետաքրքրական է Գալստյանի և Հավունչյանի (1966) Հայաստանի որոշ հողատիպերի ֆերմենտատիվ ակտիվության վերաբերյալ կատարած աշխատությունը: Հեղինակներն ապացուցել են, որ հողի ֆերմենտատիվ ակտիվությունը կախված է նրա կուտուրականացման աստիճանից, քիմիական ու մեխանիկական կազմից և գենետիկական հորիզոններից:

Տվյալ աշխատության նպատակն է եղել պարզել վիտամին Բ<sub>12</sub>-ի և նիկոտինաթթվի (РР) պարունակությունը Հայաստանի

ավելիք քան 15 շրջաններից վերցված հողերի շուրջ 300 նմուշում ըստ հողատիպերի և գնեսետիկական հորիզոնների:

Հողերի նմուշները վերցվել են Ստեփանավանի, Կիրովականի, Իջևանի, Ղափանի, Նոյեմբերյանի, Աշուարակի, Ապարանի և այլ շրջաններից: Ռևումենսիրված հողատիպերը նշել են սևահողեր, անտառային, լեռնա-մարգագետնային, պորչ, շագանակագույն և կիսաանապատային:

Վիտամինները որոշվել են միկրորիոլոգիական փորձանոթային մեթոդով: Վիտամին Բ<sub>12</sub>-ը որոշվել է Բուկինի, Արեշկինային, Կուցեայի (1954) առաջարկած մեթոդով: Հողի նախնական մշակումը կատարվել է ըստ Շոպֆերի, միայն որոշ փոփոխություններով, որոնք առաջարկվել են Աֆրիկյանի կողմից (1959): Այսպես, օրինակ՝ նկատի ունենալով տեղական հողերից շատերի բարձր հիմնայնությունը, առաջարկվել է հողերը նորացնել ոչ թե թորած շրով, այլ ացետատային բուֆերով (ρΗ—6,4):

Նիկոտինաթթուն նույնական որոշվել է միկրորիոլոգիական մեթոդով, որի հիմնական սկզբունքները նկարագրված են Օդինցովայի կողմից (1959): Այդ սկզբունքների մեջ, սակայն, մտցվել են որոշ փոփոխություններ, որոնք վերաբերում են հիմնական լուծույթներում վիտամինների և փորձանոթներում վերցված միջավայրի քանակին: Որպես ինդիկատորային կուտուրա օգտագործվել է Zygosacharomyces matxiensis Kudriavzew: Վիտամինների քանակը նմուշներում որոշվել է փոտոէկարտոլորիմետրի միջոցով (մոդել ՓԷԿ-Մ):

Անհրաժեշտ է նշել, որ նիկոտինաթթուն որոշելու նպատակով օգտագործվող Ռիգերի սննդամիջավայրին հողի էրստրակտ ավելացնելիս առաջանում է պղտորություն, որը խանգարում է նեֆելոսետրիկ նղանակով վիտամինի քանակը ճիշտ որոշելուն: Միաւուց խուսափելու համար նեֆելոսետրելուց առաջ նմուշներից յուրաքանչյուրին ավելացվել է 2—3 կաթիլ ծծմբական թթվի մեկ նորմալանոց լուծույթ, որի ազդեցության տակ լրիվ լուծվել է առաջացած պղտորությունը: Այդ քանակի թթուն, սակայն, ոչ մի ազդեցություն չի թողել ինդիկատորային կուտուրայի առաջացրած պղտորության և նրանց բջիջների նորմալ վիճակի վրա, որ առացուցվել է միկրոսկոպիկ դիտումներով:

Ստորև բերվում է վիտամին Բ<sub>12</sub>-ի և նիկոտինաթթվի պարունակությունը Հայաստանի մի քանի հողատիպերում:

Անտառային հողեր.—Այս հողերից ուսումնասիրվել

է 15 կտրվածք, որոնք վերցված են եղել ըստ գենետիկական հորիզոնների, նմուշների ընդհանուր թիվը եղել է 46։ Սակայն աղյուսակում ներկայացված են միայն 11 կտրվածքի տվյալները, որովհետև մյուս չորս կտրվածքի նմուշներում օրինաշափությունները եղել են նույնը։ Բուսական ծածկույթը միատիպ է, այն իսառնանտառ է, որը երբեմն իր տեղը զիջում է սաղարթախիտ, առանձին դեպքերում՝ հաճարի, բոխու, սոճու անտառների։

Աղյուսակ 1-ում բերված են անտառային հողերում վիտամին Բ12-ի և նիկոտինաթթվի քանակական տվյալները։ Այս, ինչպես և հաջորդ աղյուսակներում հումուսի վերաբերյալ տվյալներն ստացված են Երևանի պետական համալսարանի ագրոքիմիայի և հողագիտության ամբիոնից։

Աղյուսակի տվյալներից երեսում է, որ անտառային հողերը, հատկապես այդ հողերի առանձին շերտերը, հարուստ են վիտամիններով։ Վերին շերտերում նիկոտինաթթվի քանակը հասնում է 2800 γ /կգ, բացառիկ դեպքերում՝ 12700 γ /կգ։ Իսկ իսկ վիտամին Բ12-ի քանակը՝ 42 γ/կգ։ Իջնելով դեպի խորը շերտերը, նկատվում է թե՛ նիկոտինաթթվի և թե՛ վիտամին Բ12-ի քանակի ատտիճանական անկում։ Սակայն, պատահում են դեպքեր, երբ ստորին շերտերում վիտամինների քանակը չի պակասում, կամ քիչ է պակասում։ Այդ, հավանաբար, պետք է վերաբեր նրանց լվացմանը դեպի հողի ստորին շերտերը և անտառային ծածկոցի արմատային սիստեմի տարածմանը խորը շերտերում։ Նույն են վկայում նաև Շոպֆերի (1950)՝ այդ ուղղությամբ կատարած աշխատանքները, ինչպես նաև Գալստյանի ու Հավունջյանի (1966) աշխատությունը՝ հողում ֆերմենտների պարունակության վերաբերյալ։

Վիտամինապարունակությամբ, մեծ մասամբ, ավելի հարուստ են անտառային մուգ-գարշնագույն հողերը, համեմատաբար աղքատ են դարչնագույնները։ Դարչնագույն հողերում եղած վիտամիններին վերաբերող քանակական տվյալներում տարրերությունը է նկատվում նաև ըստ շրջանների։ Այսպես, օրինակ՝ Խշկանի ու Կիրովականի հողերն ընդհանուր առմամբ ավելի հարուստ են վիտամիններով, քան Հրազդանի և Աշտարակի հողերը։

Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ հողի օրգանական մասը, որով ընդհանրապես առավել հարուստ են անտառային հողերը, իր դրական աղքեցությունն է թողնում հողերում վիտամինների կուտակման վրա։

## Վիտամինի պարունակությունը անտառային հազարամ

Հազարից, կտրվածք՝ 2F <sub>2</sub> ամբ	Բուսածածկի, պահպանի	%		%		%		%		%	
		բա րեցման պահպանի	բարեցման պահպանի	1/4η	PP	B <sub>12</sub>	1/4η	PP	B <sub>12</sub>	1/4η	PP
անդամանին Ժամանակա- կարժեցուցան գործի 1/127 129	անդամանին լինա անհամա- սանի լինա լինա	A B <sub>1</sub> C	-0-15 15-38 38-60	4.86 4.41 1.68	12700 2165 300	19 23 2.9	լինամ-անհա- մանի լինա լինա լինա լին-	լինամ-անհա- մանի կար- գաճք	լինամ-անհա- մանի 20ին	լինամ-անհա- մանի լինա լին-	A B C
լինամ-անհա- մանի լինա կարգագոյն 9/103 104	լինամ-անհա- մանի լինա	A <sub>1</sub> A <sub>2</sub> C	-0-12 12-18 39-90	10.5 6.62 3.6	750 320 335	-42 19 18	լինամ-անհա- մանի լինա կարգագոյն լին	լինամ-անհա- մանի անա- կան լինա	լինամ-անհա- մանի անա- կան լինա	լինամ-անհա- մանի անա- կան լինա	A B C
լինամ-անհա- մանի լինա կարգագոյն 12/120	լինամ-անհա- մանի լինա	A <sub>1</sub> A <sub>2</sub> C	-0-5 5-20 40-90	12.4 1.65 0.59	1700 470 86	30 7.4 0.9	լինամ-անհա- մանի լինա կարգագոյն լին	լինամ-անհա- մանի անա- կան լինա	լինամ-անհա- մանի անա- կան լինա	լինամ-անհա- մանի անա- կան լինա	A B C
կանառային Ժամանակա- կարժեցուցան գործի 13/112	կանառային անանա	A <sub>1</sub> A <sub>2</sub> B	0-17 17-32 32-51	6.64 0.66 0.27	720 360 80	40 24 2.2	անհամառային լուսաւուն կանառային անանա	անհամառային լուսաւուն կանառային անանա	անհամառային լուսաւուն կանառային անանա	անհամառային լուսաւուն կանառային անանա	A B C
լինամ-անհա- մանի լինա կարգագոյն 212 203	լինամ-անհա- մանի լինա	A B C	0-12 12-25 25-80	6.86 4.15 1.65	- 725 270	38 11	լինամ-անհա- մանի զարգաց- ման լինա լին-	A B C			

Ս և ա հ ո ղ ե ր.—Այդ հողերից ուսումնասիրվել է 14 կտըրվածք, նմուշների ընդհանուր թիվը եղել է 45, որոնք հիմնականում վերցվել են կարբոնատային և աղազերծ սևահողերից: Աղյուսակում բերված են 12 կտրվածքի տվյալները: Բուսածածկը միապաղալ է, այն անմշակ խոտախառնորդային ծածկոց է:

Աղյուսակ 2-ի տվյալներից երանում է, որ հումուսի և վիտամինապարունակության տեսակետից կարբոնատային սևահողերը չեն զիջում, առանձին դեպքերում վիտամին Բ12-ի քանակով նույնիսկ գերազանցում են անտառային հողերին: Վիտամինապարունակությամբ լվացված սևահողերն զգալիորեն տարրերվում են կարբոնատային սևահողերից: Այս վերջիններում նիկոտինաթթվի քանակը հողի վերջին շերտում հիմնականում անցնում է 1000 γ/կգ-ից, միայն մի դեպքում 2000 γ/կգ է, իսկ վիտամին Բ12-ը կազմում է մոտ 40—70 γ/կգ: Այսինչ լվացված սևահողերում նիկոտինաթթուն հասնում է միայն 750 γ/կգ-ի, իսկ վիտամին Բ12-ը՝ 25—43 γ/կգ-ի: Կարբոնատային և լվացված սևահողերի վիտամինապարունակության այդ տարրերությունը, հավանաբար, կարելի է վերագրել լվացված հողերում կարբոնատների բացակայությանը: Վերջինները նպաստում են միկրոօրգանիզմների ինտենսիվ զարգացմանը, որն առավել կարևոր է հողում վիտամին Բ12-ի կուտակման համար:

Հստ գենետիկական հորիզոնների՝ անտառային հողերում նկատված օրինաշափությունները ակնհայտ են նաև այս հողատիպում: Այսպես, օրինակ՝ դեպի ստորին շերտերը վիտամինների քանակը աստիճանաբար նվազում է, սակայն որոշ նմուշների վերին և ստորին շերտերի միջև վիտամինների պարունակության առանձին տարրերությունը չի նկատվում:

Շագանական ականական հողերի՝ թվով 15, վերցվել են բացառապես Աշտարակի շրջանի մշակովի հողերից, 0—25 սմ վարելաշերտից: Հողերն ունեցել են տարրեր երանգավորում՝ բաց շագանակագույնից մուգ շագանակագույն: Բուսածածկը, ինչպես երևում է աղյուսակ 3-ից, աշքի է ընկնում իր տարատեսակությամբ:

Համեմատած անտառային հողերի և սևահողերի հետ, շագանակագույն հողերը բավական աղքատ են վիտամին Բ12-ով և նիկոտինաթթվով: Այստեղ նիկոտինաթթվի առավել քանակը 470 γ/կգ է, իսկ վիտամին Բ12-ինը՝ 22 γ/կգ: Տետապոտված շագանա-

## Վիտամինների պարհագությունը սննդողերուն

<i>կարբոնա- անիլին սննդող, կտրվածք</i>	<i>բառածածկի, 2% անիլին</i>	<i>վիտամիններ</i>		<i>վիտամիններ</i>		<i>վիտամիններ</i>		<i>վիտամիններ</i>	
		<i>ՊՊ</i>	<i>B<sub>12</sub></i>	<i>ՊՊ</i>	<i>B<sub>12</sub></i>	<i>ՊՊ</i>	<i>B<sub>12</sub></i>	<i>ՊՊ</i>	<i>B<sub>12</sub></i>
<i>ինհան-սն- փառանա- իլին 335</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A B C	0—28 28—43 43—80	9,67 2,28 5,79	2000 275 1050	— 9,6 21	<i>ինհան-սն- փառանա- իլին, 25/11</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A B C
<i>ինհան-սն- փառանա- իլին 236</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A B <sub>1</sub> B <sub>2</sub> C	0—20 20—40 40—60 60—80	5,94 2,05 2,89 1,68	1120 192 225 60	37 5,3 8 1,6	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A B C
<i>սննդող 333</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A B C	0—25 25—50 50—80	9,3 3,74 1,97	1250 350 75	42 9,3 6	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A B C
<i>սննդող 335/344</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	AB C D	0—20 20—40 40—60	7,9 4,1 3,05	1300 285 110	65 22 7,4	<i>սննդող</i> <i>20/303</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	C <sub>2</sub> A B
<i>սննդող I/325</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A B C	0—16 16—30 30—90	7,4 5,3 0,4	750 210 —	68 23 0,9	<i>սննդող</i> <i>14/307</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A <sub>2</sub> B <sub>2</sub> C
<i>լանցու- զալցուայլին 323/324</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A B C	0—30 30—55 55—50	14,6 0,34 0,74	1550 470 95	70 20 19	<i>սննդող</i> <i>238/339</i>	<i>առարկանոր,</i> <i>լին-սննդո-</i>	A B C

Աղյուսակ 3  
Վիտամինների պարունակությունը շագանակագույն հողերում

Հողատիպ	բուսածածկ, դյուզ	Վիտամիններ Դ/Կ	
		PP	$B_{12}$
բաց շագանակագույն	տոմատ, Եղվարդ	155	5,5
բաց շագանակագույն	խաղող, Եղվարդ	115	5,5
բաց շագանակագույն	առվույտ, Եղվարդ	370	8,1
բաց շագանակագույն	առվույտ, Լուսակերտ	370	4,8
բաց շագանակագույն	ցորեն, Լուսակերտ	275	6,5
շագանակագույն	վարելահող, Օհանավան	165	8,0
շագանակագույն	խոզան, Օհանավան	155	10,0
շագանակագույն	կարտոֆիլ, Օհանավան	295	2,5
շագանակագույն	կարտոֆիլ, Կարրի	330	19
մուգ շագանակագույն	մըրգատու, այզի, Կարրի	470	3,5
բաց շագանակագույն	եղիպատացրեն, Մուզնի	284	6
բաց շագանակագույն	եղիպատացրեն, Մուզնի	432	21
բաց շագանակագույն	եղիպատացրեն, Մուզնի	125	22
բաց շագանակագույն	խաղող, Աշտարակ	256	5,5
բաց շագանակագույն	լոբի, Աշտարակ	224	6,7

Աղյուսակ 4

Վիտամինների պարունակությունը գորչ հողերում

Բուսածածկ	Հողի դո՞ս	Բուսածածկ		Բուսածածկ	Հողի դո՞ս	Բուսածածկ		Բուսածածկ
		Հողի դո՞ս	Բուսածածկ			Հողի դո՞ս	Բուսածածկ	
Խաղողի այզի	A	0—12 2,4	1,49	բանջարանց	A	0—23 1,5	2,59	
	B	12—32 2,0	1,21		B	23—45 1,3	1,66	
	C	32—70 1,1	1,23		C	45—75 0,9	1,16	
Խաղողի այզի	A	0—29 2,5	1,67	ծիրանի	A	0—30 3,4	1,4	
	B	29—49 1,6	0,9	այզի	B	30—55 2,4	0,88	
	C	49—60 0,2	0,24		C	55—80 2,3	0,47	
վարելահող (նախ- կինում խաղողի այզի)	A	0—17 1,3	1,1	պտղատու	A	0—32 4,0	4,4	
	B	17—40 0,9	0,24	այզի				
	C	40—65 0,5	0,08					
Խաղողի այզի	A	0—23 2,5	1,07	պտղատու	A	0—28 3,0	2,55	
	B	23—35 1,2	0,97	այզի	B	28—60 1,4	1,18	
	C				C	60—80 0,9	2,29	
բանջարանց (նախկինում առ- վույտ)	A	0—26 1,8	1,49	խաղողի	A	0—20 2,9	0,3	
	B	26—46 1,1	1,64	այզի (նորա- տույտ)	B	20—60 2,2	1	
	C	46—72 0,9	0,22		C	60—80 1,6	0	
Խաղողի այզի	A	0—41 2,8	1,85	վարելահող	A	0—20 3,3	3,14	
	B	41—75 1,4	0,74		B	20—50 1,8	2,36	

Աղյուսակ 3  
Վիտամինների պարունակությունը կիսաանապատային հողերում

Հողատիպ, կտրվածք	բռնածածկ, շրջան	Հորիզոն, մյուսն, ամ	Վիտամիններ	
			pp	Բ12
գեղեցկույժն կիսաանապատային ամ 48/63	արտավագայր, Երևանի շրջանից	A	0—26	81 4
		B	26—56	27 1.9
		C	58—86	0 0
կարմրագույժն կիսաանապատային ամ 54/63	Նոր Խոստածածկ, Երևանի շրջանից	A	0—22	55 5
		B	22—50	37 4.1
		C	50—100	0 0
կարմրագույժն կիսաանապատային ամ 55/63	Նոր Խոստածածկ, Երևանի շրջանից	A	0—30	55 3.1
		B	30—42	40 2.5
		C	42—100	0 0
երբ կիսաանապատային 1/63	առին, Հոկտեմբերյան	A	0—20	200 9
		B	20—40	50 1.4
		C	40—80	34 0
բաց գորչ կիսաանապատային ամ 3/63	առվույտ, Հոկտեմբերյան	A	0—16	95 3.3
		B	16—31	86 2.9
		C	31—80	45 0
գորչ կիսաանապատային 7/63	ուղտափուշ, Եղմիածին	A	0—14	126 0
		B	14—35	— 0
		C <sub>1</sub>	35—58	17 0
		C <sub>2</sub>	58—80	0 0
աղուտ 14/63	ուղտափուչ, Եղմիածին	A <sub>1</sub>	0—7	145 0
		A <sub>2</sub>	7—16	105 0
		B	16—67	45 0
		C	67—88	14 0
աղուտ 13/63	ուղտափուչ, Հոկտեմբերյան	A <sub>1</sub>	0—5	0 0
		A <sub>2</sub>	6—82	0 0
		B	82—150	0 0

կագույն հողերում նրանց երանգավորումը և բռնածածկը օրինացափորեն չեն անդրադարձել վիտամինապարունակության վրա:

Գորշ հողեր.—Այս հողատիպի նմուշներում որոշվել է միայն վիտամին Բ12-ի պարունակությունը, որի տվյալները բերված են աղյուսակ 4-ում: Ուսումնասիրվել է 12 կտրվածք, նմուշների ընդհանուր թիվը եղել է 31, որոնք վերցված են Հրազդան գետի մերձափնյա գոտուց (Երևանի պետհամալսարանի բիոկայան): Սկզբնական շրջանում այդ հողերը ծածկված են եղել ճահճուտներով, հետագայում նրանք չորացվել, յուրացվել և վեր են ածվել կուլտուր-ռոռոգվող հողերի: Մրանք կարելի է զանել հումուսով աղբատ փոքր հզորությամբ հողերի շարքին:

Ինչպես աղյուսակի տվյալներն են ցույց տալիս, վիտամին Բ12-ի բանակը շատ բիշ է այստեղ, նրա պարունակությունը վերին շերտերում չի գերազանցում 4,4 γ/կգ: Գենետիկական հորի-

Աղջուռակ 6

Վիտամինների սահմանային քանակները տարբեր հողատիպերում

Հողատիպ	Հորիզոն	Համարների թվը	Հզորություն	Վիտամիններ Դ/կգ	
				PP	B <sub>12</sub>
անտառային	A <sub>1</sub> A <sub>2</sub> B <sub>1</sub> B <sub>2</sub> C	14 11 10	0—32 8—60 20—90	575—2880 205—2000 100—360	15—42 2—24 1—18
սեանցիդ	կարսոնա- տային	A B C	6 7 6	0—30 28—55 30—90	750—2000 200—470 60—285
	աղաղերծ	A B C	7 5 7	0—25 25—55 30—90	285—750 140—460 50—230
	շագանակագույն	A	15	0—25	155—470
գորշ	A B C	12 11 18	0—97 17—50 32—80	— — —	1—4,4 0,2—2,7 0—2,3
կիսանապատային	A B C	10 8 8	0—30 15—67 30—100	80—200 0—86 0—45	0—9 0—3 0

զոնների վերաբերյալ վիտամինապարունակության օրինաշափությունները նույնն են, ինչ նախորդ հողատիպերում: Բուսածածկը որոշակի ազդեցություն չի թողել հողում վիտամին Բ<sub>12</sub>-ի պարունակության վրա:

Կիսանապատային հողատիպը — Հողանմուշները, թը-վով 20 վերցվել են 8 կտրվածքից երկանի շրջակայքում, Հոկտեմբերյանի և էջմիածնի շրջաններում: Հանդիպում են տարբեր երանգավորման կտրվածքներ՝ կարմրագույն, դեղին, գորշ և ալյն, և աղուտներ: Հասկանալի է, որ այս հողատիպը մեր հետազոտած հողատիպերի շարքում օրգանական նյութերով ամենից աղքատն է: Այդ են ցույց տալիս նաև աղյուսակ 5-ի տվյալները վիտամինապարունակության վերաբերյալ: Որոշ կտրվածքներում և նմուշներում բոլորովին բացակայում է վիտամին Բ<sub>12</sub>-ը, նիկոտինաթթուն ավելի քիչ դեպքերում է բացակայում:

Օրինաշափությունները ըստ գնենետիկական հորիզոնների գարձյալ նույն են, ինչ նախորդ հողերամ:

Այսպիսով վերը բերված տվյալներն ապացուցում են, որ նիկոտինաթթուն և վիտամին  $B_{12}$ -ը օրինաշափորնեն են տարածված տարբեր հողատիպերում և ըստ գնենետիկական հորիզոնների: Այդ պարզ երևում է նաև աղյուսակ ծ-ի հավաքածան տվյալներից, որտեղ բերված են վիտամինների սահմանային բանակները:

### Ամփոփում

1. Վիտամինապարունակությամբ ամենահարուստը անտառային հողերն են: Վիտամինների քանակը մի քիչ պակաս է կարրունատային սևանողերում: Վերջինները վիտամին  $B_{12}$ -ի պարունակությամբ երբեմն գերազանցում են անտառային հողերին: Այսուհետև վիտամինների նվազող քանակությամբ միշտանց հաջորդում են լվացված սևանողերը, շագանակագույն, գորշ և կիսանապատային հողերը:

2. Վիտամիններով անհամեմատ հարուստ են հողի վերին շերտերը: Դեպի ստորին շերտերը նկատվում է վիտամինների քանակի աստիճանական անկում:

3. Ըստ տարբեր հողատիպերի և գնենետիկական հորիզոնների վիտամինների տարածվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց պարունակությունը գերակշռող է օրգանական նյութերով հարուստ հողերում և, ըստ գրական տվյալների, կուլտուրականացված հողերում: Գորշ և կիսանապատային հողերը շատ աղքատ են օրգանական նյութերով և վիտամինների քանակն էլ նրանցում ամենից քիչ է:

Ա. Վ. Կիրակոսյան, Գ. Ա. Գրիգորյան, Ս. Խ. Տառալյան

**Распространение витамина  $B_{12}$  и никотиновой кислоты  
в некоторых типах почв Армении**

### Резюме

Работа посвящена изучению распространенности витамина  $B_{12}$  и никотиновой кислоты в основных типах почв Армении по генетическим горизонтам. Образцы почв, в количестве 300, взяты примерно из 15 районов. Типы почв следующие: черно-

земы, лесные, горно-луговые, бурые, каштановые и полупустынные.

На основании проведенных исследований можно сделать следующие выводы:

1. Лесные почвы наиболее богаты витаминами, при этом лесные темно-каштановые содержат их больше, чем лесные каштановые.

2. В карбонатных черноземах витаминов несколько меньше, чем в лесных почвах. Но количество витамина  $B_{12}$  здесь иногда преобладает. Выщелоченные черноземы значительно беднее витаминами, чем карбонатные.

3. В каштановых почвах витаминов меньше, чем в выше приведенных типах почв, а бурые и особенно полупустынные почвы бедны витаминами и органическими веществами. В некоторых полупустынных почвах витамины вовсе отсутствуют.

4. По генетическим горизонтам корреляция сохраняется для всех типов почв, т. е. витаминов больше в верхнем слое, затем их количество постепенно уменьшается. В лесных почвах и черноземах содержание витаминов в нижних слоях иногда не уменьшается, а местами даже увеличивается.

5. Наши исследования показали, что содержание витаминов в почвах находится в прямой зависимости от количества органических веществ.

A. V. Kirakossian, G. A. Grigorian, S. KH. Tapaltsian

The distribution of vitamin  $B_{12}$  and nicotinic acid in certain soil types of Armenia

#### Summary

The following deductions are based on the experiments conducted:

forest soils are the richest in vitamins; in carbonate czernosem soils the vitamins are somewhat lesser than in forest soils; the leached czernosem soils are much poorer in vitamins than the carbonate ones;

in chestnut soils the vitamins are less than in the foregoing

two types of soils while the brown and especially the semi-desert soils are poor in vitamins and organic substances. Vitamins are lacking in certain semi-desert soils;

as to genetic horizon the correlation is preserved for all sorts of soils, i. e. vitamins are in profusion in the upper layers; then they gradually decrease;

the investigations proved that the vitamin content in soils is directly linked with the amount of organic substances in the soil.

#### ЛИТЕРАТУРА

- Африкян Э. Г., Бобикян Р. А. 1959. Наличие и образование витамина В<sub>12</sub> в почве. ДАН АрмССР, XXIX, 2.
- Букин В. И., Арешкина Л. Я., Кучева Л. С. 1954. Макро- и микроопределения витамина В<sub>12</sub>. «Биохимия», 19, 6, 713.
- Галстян А. Ш., Авунджян Э. С. 1966. О ферментативной активности почв Арацской равнины. «Биологический журнал Армении», XIX, 10, 14.
- Красильников Н. А. 1957. О значении почвенных микроорганизмов в питании растений. «Микробиология», XXVI, 6, 659.
- Овчаров К. Е. 1955. Витамины в жизни растений. Изд. АН СССР.
- Однцов Е. И. 1959. Микробиологические методы определения витаминов. Изд. АН СССР.
- Чайлахян М. Х. 1959. Влияние витаминов на рост и развитие высших растений. «Витамины», IV, АН УССР.
- Шавловский Т. М. 1955. Роль микроорганизмов ризосфера в витаминном и аминокислотном питании растений. Сб. «Изотопы в микробиологии», 186. Изд. АН СССР.
- Шопфер В. Х. 1950. Биохимия и физиология витаминов, I, 9.